# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

## թիվ ՍՑ-ԷՍ-2019/13

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.01.2019թ. թիվ 26-3/436-19 գրությամբ «Ուղղալար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.01.2019թ. թիվ 02/16.4/43-19 գրության հիման վրա 17.01.2019թ. «Ուղղալար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 10.01.2019թ. թիվ 02/16.4/43-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ 10.08.2016թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ պատվիրատու) և «Ուղղալար» ՍՊԸ-ի միջև կնքվել է Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը և պայմանագրի 2.1.3 կետը՝ պատվիրատուն վերը նշված կազմակերպության հետ կնքված պայմանագիրը 09.01.2018թ. միակողմանի լուծել է:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիազորված ներկայացուցիչ Հրաչիկ Ավետիսյանը:

**3. «Ուղղալար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 17.01.2019թ. գրությամբ դիմել է «Ուղղալար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2019թ. թիվ 26-3/436-19 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Ուղղալար» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**4. ՍՑ-ԷՍ-2019/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2019թ. թիվ 26-3/436-19 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 10.01.2019թ. թիվ 02/16.4/43-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Ուղղալար» ՍՊԸ-ի միջև 10.08.2018թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ գնման պայմանագիրը, Պատվիրատուի կողմից. «Ուղղալար» ՍՊԸ-ին ուղղված 10.01.2019թ թիվ 02/16.4/33-19 և 20.08.2018թ. թիվ 02/27/4288-18 գրությունները, Դավիթ Հովսեփյանի անվան թիվ 191 դպրոցի տնօրենի կողմից 30.01.2018թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին ուղղված թիվ 25 գրությունը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Ուղղալար» ՍՊԸ-ի միջև 10.08.2018թ. կնքվել է N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:
- 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա. Չընդունել Ծառայությունը՝ իր հսկողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը նույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու նույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ. Հրաժարվել նույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու նույն պայանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցած Ծառայությունը չի համապատասխանում նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը:

- 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

- 7.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

- 7.6 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ն ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 հավելված՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայությունների մատուցման սկիզբ է սահմանվել՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից, ավարտը՝ շինմոնտաժային աշխատանների ավարտ:

Դավիթ Հովսեփյանի անվան թիվ 191 դպրոցի տնօրենը 30.01.2018թ. թիվ 25 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահին հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ դիմում հետևյալ խնդրանքով:

Ինչպես հայտնի է Դավիթ Հովսեփյանի անվան թիվ 191 դպրոցում կատարվում են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց լուծման համար ակնկալում եմ Ձեր օժանդակությունը: Նախագծով դպրոցի Դ մասնաշենքում նախատեսված է մետաղապատ կոնստրուկցիաներով ապակեպատ տանիքի կառուցում, սակայն մտահոգված եմ այն փաստով, որ հետագա շահագործման համար այն նպատակային չէ, ուստի խնդրում եմ նախատեսված գումարը տրամադրել.

1. դպրոցի մյուս մասնաշենքերի տանիքների վերանորոգմանը,

2. տնօրենի աշխատասենյակի և ընդունարանի ձևափոխմանը,

3. երրորդ հարկում ևս մեկ դասասենյակի ավելացմանը/ազատ տարածքի հաշվին

4. վինիլային հատակի փոխարինմանը լամինատով:

Խնդրում եմ նաև վերանորոգման աշխատանքներից հետո կատարել դպրոցի բակի ասֆալտապատում:»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 20.08.2018թ. թիվ 02/27/4288-18 գրությամբ «Ուղղալար» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտե է դիմել Դավիթ Հովսեփյանի անվան թիվ 191 դպրոցի տնօրենը՝ դպրոցի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերում որոշակի փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Խնդրում եմ, հնարավորինս սեղմ ժամկետներում ուսումնասիրել առաջացած խնդիրները և ըստ անհրաժեշտության նախագծային փաստաթղթերում, սահմանված կարգով, դրական փորձաքննության արդյունքներով կատարել համապատասխան փոփոխությունները:»:

ՀՀ քաղաքաշինության ծրագրերի իրականացման վարչության պետը գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքներն իրականացվում են կապալառու «Խաչատուրյանի Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից 19.12.2017թ. N ԲԸՀԱՇՁԲ-16/9 պայմանագրի համաձայն: (Նշված օբյեկտի շինարարական աշխատանքների

նկատմամբ հեղինակային հսկողություն իրականացնում է «Ուղղալար» ՍՊԸ-ն (N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ կնքված 10.08.2018թ.)):

2018թ. հուվարի 30-ին թիվ 25 գրությամբ Երևանի թիվ 191 դպրոցի տնօրենը նախագծանախահաշվային փաստաթղթերում որոշակի փոփոխություններ կատարելու խնդրանքով դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե և կոմիտեի կողմից 02/27/4288-18 գրությամբ հանձնարարվել է «Ուղղալար» ՍՊԸ-ի տնօրենին ուսումնասիրել առաջացած խնդիրները և սահմանված կարգով կատարել համախատասխան փոփոխություններ, սակայն նշված խնդրին լուծում չի տրվել և գրությանը չի արձագանքվել:

«Ուղղալար» ՍՊԸ-ն 2018թ. Պայմանագրով ստանձնած ծառայությունը չի մատուցել, օբյեկտի նախագծային փոփոխությունների հետ կապված քննարկումներին չի մասնակցել և անհրաժեշտ փոփոխություններ չի իրականացրել, չի այցելել շինարարկան օբյեկտ, ինչի մասին հավաստում են նաև շինարարության վարման մատյանում նշումների բացակայությունը, ինչը սահմանված է հեղինակային հսկողության կարգով, կատարողական փաթեթ և հաշվետվություն չի ներկայացրել՝ չնայած պատվիրատուի կողմից բազմաթիվ զգուշացումների:

Արդյունքում օբյեկտի նկատմամբ նախատեսված նորմատիվ պահանջները չեն բավարավել, գնահատվել են որպես թերի՝ ոչ պատշաճ կատարված հեղինակային հսկողություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանատու ստորաբաժանումը նպատակահարմար է համարում N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ 10.08.2018թ. գնման պայմանագիրը միակողմանի լուծել պայմանագրի 2.1.3 կետի համաձայն:»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 10.01.2019թ. թիվ 02/16.4/33-19 գրությամբ «Ուղղալար» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ պատվիրատու) և «Ուղղալար» ՍՊԸ-ի միջև 10.08.2016թ. կնքվել է Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը և Պայմանագրի 2.1.3 կետը՝ պատվիրատուն 09.01.2018թ. միակողմանի լուծում է պայմանագիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կտեղադրվի www.gnumner.am կայքում:»:

Միաժամանակ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 10.01.2019թ. հրապարակել է www.gnumner.am կայքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Ուղղալար» ՍՊԸ-ի միջև 10.08.2018թ. կնքվել է N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ ծածկագրով գնման պայմանագիր:

- «Ուղղալար» ՍՊԸ-ն 2018թ. Պայմանագրով ստանձնած ծառայությունը չի մատուցել, օբյեկտի նախագծային փոփոխությունների հետ կապված քննարկումներին չի մասնակցել և անհրաժեշտ փոփոխություններ չի իրականացրել, չի այցելել շինարարական օբյեկտ, ինչի մասին հավաստում են նաև շինարարության վարման մատյանում նշումների բացակայությունը, ինչը սահմանված է հեղինակային հսկողության կարգով, կատարողական փաթեթ և հաշվետվություն չի ներկայացրել, որի արդյունքում օբյեկտի նկատմամբ նախատեսված նորմատիվ պահանջները չեն բավարավել, գնահատվել են որպես թերի՝ ոչ պատշաճ կատարված հեղինակային հսկողություն:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեն N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ ծածկագրով գնման պայմանագիրը 09.01.2019թ. միակողմանի լուծել է և լուծելու մասին հայտարարությունը 10.01.2019թ. հրապարակել է www.gnumner.am կայքում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ուղղալար» ՍՊԸ-ն, Պայմանագրով նախատեսված ծառայությունները Պայմանագրի տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան չմատուցելով՝ խախտել է 10.08.2018թ. կնքված N ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՀԾՁԲ-16/10 Հ գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ «Ուղղալար» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.01.2019թ. թիվ 26-3/436-19 գրությամբ «Ուղղալար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ուղղալար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**